4.03.2022թ.
349-70

Բարձրագույն դատական խորհրդի նախագահ
Գագիկ Ջհանգիրյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ջհանգիրյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել «Իրավաբանների հայկական ասոցիացիա» (ԻՀԱ) հասարակական կազմակերպությունը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում։

ՀՀ դատական եւ իրավական բարեփոխումների 2019-2023 թթ. ռազմավարության եւ դրանից բխող գործողությունների ծրագրերի 2019-2021 թվականների կատարման, ինչպես նաեւ հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների 2021թ. տարեկան կատարման այլընտրանքային հասարակական մշտադիտարկման շրջանակում 2022 թվականի հունվարից ԻՀԱ-ն իրականացնում է տեղեկությունների հավաքագրում։ Ի թիվս այլ մարմինների, ԻՀԱ-ն դիմել է նաեւ ՀՀ բարձրագույն դատական խորհրդին տեղեկություն ստանալու նպատակով։

Ըստ ԻՀԱ գործադիր տնօրեն Արտակ Սարիբեկյանի՝ մինչ այժմ ԻՀԱ թիմից ուղարկվել է թվով 5 գրություն, որոնցից 4-ը՝ ՀՀ դատաիրավական բարեփոխումների ռազմավարության շրջանակում (սկզբնական գրություններն ուղարկվել են 2022 թվականի հունվարի 3-ին), իսկ մեկը՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակում (սկզբնական գրությունն ուղարկվել է 2022 թվականի հունվարի 18-ին) (գրությունները կից ներկայացված են)։

ԻՀԱ-ին փաստացի չեն տրամադրվել պահանջված տեղեկությունները ԲԽԴ-ի կողմից։ Ուստի, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով՝ խնդրում ենք տրամադրել լիարժեք և ամբողջական տեղեկություն «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի վերոնշյալ գրություններով ներկայացված հարցերի վերաբերյալ։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում։

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am